«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը:

Դաստիարակ՝ Կարինե Կարապետյան

Մանկապարտեզ՝ « Ռինդի մանկապարտեզ **» ՀՈԱԿ**

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1 ԵՐԵԽԱՅԻ ՆԱԽՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 ինքնուրույնության զարգացումը և դաստիարակությունը ……4

1.2 Նախաձեռնողականության, զառգացումն ու դաստիրակությունը……5

1.3 Երեխայի նախաձեռնողականության և ինքնուրույնության դաստիարակության առանձնահատկությունները և զարգացումը նախադպրոցականների գործունեության հիմնական ձևերում……6

1.4 Երեխայի ստեղծագործական մտքի զարգացումը……7

1.5 Խաղայի դերն ու նշանակությունը……8

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 2. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՄԱՆԸ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐՈՒՄ . ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ……10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……12

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը. Երեխայի ճիշտ զարգացումը իր ուրույն և մեծ դերն ու նշանակությունն ունի անձի ձևավորման վրա: Մենք միշտ պետք է առաջնային համարենք երեխայի տարիքային զարգացման խթանումը, հետագայում հասարակությանը հասուն, կայացած, ինքնուրույն, նախաձեռնող սան տալու համար: Օրեցօր ավելացող նորագույն տեխնոլոգիաները, սոցիալական ցանցը, գաջեթները որքան էլ ունեն իրենց դրական ազդեցությունը , նույնչափ էլ ազդում են երեխայի ինքնուրույնության ձևավորման վրա: Չենք կարող մոռանալ նաև ընտանեկան գերխնամքի մասին, երեխային օգնելու, գործը հեշտացնելու համար շատ ծնողներ երեխայի գործունեության մեծ մասը իրենք են կատարում, երեխային հետ պահելով տարատեսակ <<երևակայական>> վտանգներից:

Հետազոտության նպատակն է ինչպես տեսական վերլուծությամբ, այնպես էլ գործնական պարապմունքների արդյունքում դուրս բերել այնպիսի մեթոդներ, որոնք կօգնեն զարգացնել երեխայի ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը և ստեղծագործ միտքը:

Մեր արջև դրված **խնդիրներն** են՝

- Նախաձեռնողականության, ինքնուրույնության, ստեղծագործ մտքի զարգացման վերաբերյալ տեսական վերլուծություն
- Հետազոտական գործիքակազմի առանձնացում
- Հետազոտվող խմբի ստեղծում
- Որակական վերլուծության իրականացում

ԳԼՈՒԽ1: ԵՐԵԽԱՅԻ ՆԱԽՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 ինքնուրույնության զարգացումը և դաստիարակությունը

երեխան զարգանում է գործունեության միջոցով: Մանկական գործունեության ցանկացած ձև պարունակում է որոշակի հասարակական փորձ,որի յուրացման ընթացքում ծագում և լուծվում են իմացական բնույթի տարբեր խնդիրներ: Գործունեության զարգացումը նաև իմացական խնդիրների լուծման գործընթաց է: Յուրքանրյուր գործունեության, անձի որակի ձևավորման արդյունավետ զարգացումը կապված է մի շարք գործոնների ազդեցության հետ: Ինքնուրույության դաստիարակությունը պայմանավորված է նրանով, թե ինչպես են մեծահասակի հետ համատեղ գործունեության ընթացքում երեխայի կողմից յուրացվում գործելու միջոցները, հնարները և դրանց ընդհանրացված ձևերը: Ինքնուրույնության զարգացման արդյունքը պետք է լինի այն, որ երեխան կարողանա նոր պայմաններում դրսևորել իր գիտելիքները, հմտությունները և դրա հետ մեկտեղ ձգտի գտնել ու իրականացնել գործելու նոր միջոցներ, հնարներ: Ինքնուրույնությունը դրսևորվում է գործունեության տարբեր ձևերում՝ կիրառական, տեսական, հաղորդակցման: Տարբերակվում են՝ իմացական ինքնուրույնություն, մտածողության ինքնուրույնություն, վարքի ինքնուրույնություն հասկացությունները: Նախադպրոցական տարիքի երեխաների ինքնութույնությունը դրսևորվում է հաղորդակցման, խաղային, արդյունավետ, աշխատանքային գործունեության մեջ և վարքի ձևերում: Ինքնուրույնությունն արտահայտվում է դեռևս վաղ տարիքից, սակայն կայուն անձնայաին որակ է դառնում ավագ նախադպրոցական տարիքում: Ինքնուրույնությունն անհրաժեշտ է երեխային՝ շրջապատում կողմնորոշվելու և առօրյա վարքի համար: Ինքնուրույնության զարգացումը կապված է երեխայի ընդհանուր զարգացման հետ և օրինաչափորեն ուղեկցում է նրան: Զարգացման ընթացքում երեխայի և սոցիալական միջավայրի միջև անխուսափելիորեն ստեղծվում են որոշակի փոխհարաբերություններ, կապեր, որոնցով էլ պայմանավորված է երեխայի անձի զարգացման բնույթը: Այդ ընթացքում

կարևոր է, թե ինչպես է երեխան յուրացնում գործելու միջոցները և ինչպես է նրան հաջողվում դրանց իրականացումը:

Փոքր ինչ հաջողությունը, կապված առաջին հմտությունների, կարողությունների դրսևորման հետ, դրդում են երեխային ինքնուրույն գործելու: Երբ երեխան համոզվում է, որ իրեն հաջողվեց մեծահասակին ընդօրինակելով կատարել որևէ արդյունավետ գործողություն, նրա մեջ առաջանում են դրական հույզեր, ապրումներ, զգացմունքներ: Ուրախությունն ու հպարտությունը այն մտքից,որ իրեն հաջողվեց հասնել իր նպատակին, մղում են երեխային առավել ինքնուրույնության և սխրանքների: Երեխայի ինքնուրույնության զրագացումը պայմանավորված է հետևյալ գործոնոնորով՝ մեծահասակի առաջատար դերով և երեխայի անձնական ակտիվության, նախաձեռնության զարգացմամբ: Ինքուրույնության շարժիչ ուժն է դառնում այն հակասությունը, որ ստեղծվում է նախադպրոցական տարիքին բնորոշ երկու հիմնական մղումներից՝ գործել ինքնուրույն, անկախ մեծահասակից, բայց լինել մեծահասակի նման և օբյեկտիվ հնարավորությունների միջև: Այդ հակասությունը լուծվում է երեխայի դաստիարակության և զարգացման ավելի բարձր մակարդակով, երբ երեխան հմուտ է և տիրապետում է կարողությունների, գիտելիքների ավելի լայն շրջանակի: Երեխայի դաստիարակության մեջ միահյուսված են երկու ուղղություններ: Առաջինը. նախ երեխայից պահանջվում է մասնակցել, հնարավորության սահմաններում, մեծահասակների գործունեությանը: Երկրորդի նպատակն է ամեն կերպ զարգացնել երեխայի ինքնուրույնությունը, նախաձեռնությունն ու ակտիվությունը:

1.2 Նախաձեռնողականության, զառգացումն ու դաստիրակությունը

Մանկության տարիներին ինքնուրույնության զարգացումը որոշ գիտնականներ կապում են ընդօրինակման հետ: Հաստատված է, որ վաղ տարիքում երեխայի ամենաուժեղ պահանջմունքը մեծահասակի հետ իմացական համագործակցությանը մասնակցելն է: Այդ ակտիվ պահանջմունքի իրականացումն արտահայտվում է մանիպուլյատիվ և կողմնորոշման գործողությունների արդյունավետ զարգացմամբ: Ընդօրինակումը ուսումնառության հետ մեկտեղ

նպաստում է երեխաների գործունեության պարզ ձևերի զարգացմանը, որոնց ընդերքում և ծնվում են նախաձեռնող գործողությունների տարրերը:

Ընդօրինակման նշանակությունը առաջին հերթին այն է, որ մյուսներին ընդօրինակելով, կրկնելով որոշակի գործողություններ, դրանց կատարման եղանակները, երեխան սկսում է աստիճանաբար ինքն իրեն ընդօրինակել՝ ճշտությամբ վերարտադրելով յուրացվող հնարներն ու միջոցները:

Ընդհանրապես ակտիվությունը դրսևորվում է շարժումներում, քանի որ հատկապես շարժումն է ապահովում կյանքը, աշխարհճանաչումը: Ճանաչողական ակտիվությունը կրում է կենսապահովման բնույթ, քանի որ նպաստում է երեխայի կողմնորոշմանը կյանքում: Ակտիվությունը դրսևորվում է նաև հույզերում, քանի որ երեխան երկար ժամանակ առաջնորդվում է ոչ թե գիտակցությամբ, այլ հույզերով: Նա հուզական ակտիվության ներգործության տակ է: Ակտիվությունը համարվում է գործունեության խթանիչ և ընկած է երեխայի գործունեության հետևյալ ձևերի հիմքում՝ խաղ, աշխատանք, ուսուցում: Խաղն ուղղված է ակտիվության պահանջմունքի դրսևորման բավարարմանն այն դեպքում, երբ հնարավոր չեն իրական գործողությունները: Աշխատանքային գործունեությունն ուղղված է իրական արդյունքների ստացման պահանջմունքների բավարարմանը, ինքնահաստատմանը:

1.3 Երեխայի նախաձեռնողականության և ինքնուրույնության դաստիարակության առանձնահատկությունները և զարգացումը:

Ինքնուրույնության դաստիարակությունը պայմանավորված է նրանով, թե ինչպես է մեծահասակը ղեկավարում երեխայի գործունեությունը: Հնարավոր չէ մեխանիկորեն վարժեցնել երեխայի ինքնուրույն գործելու ունակությունները: Նրա մեջ պետք է առաջացնել ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու, իր առջև ծառացած խնդիրները ինքնուրույն լուծելու ցանկություններ: Պետք է ստեղծել նաև այնպիսի իրադրություն, որ երեխան ձգտի ինքնուրույն հասնել դրված նպատակներին, ինչպես և սովորի իր առջև ինքնուրույն դնել որևէ նպատակ և լուծել առաջացած խնդիրը: Վարքի ինքնուրույնությունը ձևավորվում է այն դեպքում, երբ երեխայի մոտ առաջանում են համապատասխան կայուն սովորություններ, որոնք անհրաժեշտ են

ինքնուրույն գործելու համար և որոնք ժամանակի ընթացքում դառնում են երեխայի բնավորության կայուն գծեր:

Եթե ընտանիքում երեխային հետևողականորեն սովորեցնեն խաղալուց հետո կամ երեկոյան քնելուց առաջ մեծահասակի հսկողությամբ (սկզբնական շրջանումնաև օգնությամբ) հավաքել խաղալիքները կամ իրեն պատկանող իրերը, ապա դա կդառնա կայուն սովորություն: Գործունեության զարգացման ընթացքում ձևավորվում է երեխայի ինքնուրույն նպատակ դնելու կարողությունը, տարբեր գործողություններ կատարելու նախաձեռնությունը, որևէ խնդիր լուծելու ցանկությունը: Երեխայի ամենաուժեղ պահանջը՝ ակտիվ գործելու ձգտումը, իրականանում է հենց ինքնուրույն գործելու և հաղորդակցվելու միջոցով:

1.4 Երեխայի ստեղծագործական մտքի զարգացումը

Վեց տարեկան երեխաների ինքնուրույնության ուսումնասիրությունը թույլ է տվել բացահայտել, որ ինքնուրույնության հիմնական բաղադրիչ մասերն են երեխայի կատարողական ակտիվությունը, ինքնագործունեությունը, ստեղծագործական հակումները: Կատարողական ակտիվությունը ինքնուրույնության համեմատաբար պարզ ձևն է, սակայն այն երեխայից պահանջում է կատարել այնպիսի գործողություններ, որոնք համապատասխանում են մեծահասակի տրված օրինակին: Ինքնագործունեությունը դրսևորվում է այն դեպքում, երբ երեխան առանց օրինակի, ինքնուրույն, սեփական նախաձեռնությամբ սկսում է դրսևորել յուրացրած գիտելիքները կամ ձևավորված հմտությունները:

Ինքնուրույնության զարգացման ամենաբարձր աստիճանը բնութագրվում է նրանով, որ երեխայի գործունեության մեջ հանդես են գալիս ստեղծագործելու տարրեր:

Երեխայի իմացական ակտիվությունը տարբերվում ակտիվության, ինքնուրույնության մյուս ոլորտներից: Այն իր արտահայտությունն է գտնում երեխայի իմացական ձգտումների, կարողությունների, ստեղծագործական պրպտումների մեջ: Ինչպես ամեն տիպ, «իմացական ինքնուրույնությունը» նույնպես հիմնվում է երեխայի ակտիվության վրա: Այն իրականանում է ինքնուրույն մտածելու, դատելու ունակությունների միջոցով: Այդ ընթացքում՝ երեխայի մեջ զարգանում են նոր իրադրություններում ինքնուրույն կողմնորոշվելու, նոր խնդիրներ առանձնացնելու, լուծման միջոցները գտնելու կարողությունները:

Ինքնուրույնության զարգացման հիմնական գործոններից է այն ունակությունը, երբ երեխան կարողանում է քննադատաբար հարաբերակցել մեծահասակից ստացվող նոր գիտելիքները ինքնուրույնաբար յուրացվածի հետ: Այդ գործընթացը միանշանակ կապված է նրա կամքի ուժի, մտավոր ջանքեր գործադրելու կարողության և այդ ամենին ուղեկցող՝ հույզերի հետ:

Նախադպրոցական մանկության տարիներին երեխաների ինքնուրույնությունը ձևավորվում է տարբեր տիպի գործունեության ընթացքում՝ խաղային, աշխատանքային, ուսումնական:

1.5 Խաղայի դերն ու նշանակությունը

Խաղը իրականության երևակայական արտացոլումն է: Այն աշխարհաճանաչման ուղի է, որի միջոցով երեխան կյանք է մտնում, հարստացնում իր զգայական փորձը, հարաբերություններ հաստատում մարդկանց հետ: Հարկ է նշել, որ նախաձեռնության, ինքնուրույնության, ակտիվության դաստիարակության գործում մեծ է ստեծագործական խաղերի դերը (սյուժետադերային, կառուցողական, խաղ-բեմականացումներ, խաղ-փորձարկումներ): Վերջիններս համարվում են ամենաարդյունավետը ինտելեկտուալ նախաձեռնության, ստեղծագործելու կարողությունը զարգացնելու համար: Այս խաղերի ժամանակ, արդեն ավագ տարիքի երեխաները ինքնուրույն են որոշում խաղի ընթացքը, բաշխում դերերը, ընթացքում հայտնում կարծիք այս կամ այն հարցի վերաբերյալ: Այդ իսկ պատճառով էլ մանկավարժը պետք է անընդհատ ընդլայնի երեխաների պատկերացումները շրջապատի վերաբերյալ, հագեցնի նրանց նոր տպավորություններով:

Ինչպես նաև մեծ է արդյունավետ գործունեության տարբեր ձևերի (նկարչություն,
ծեփակերտում, կառուցողական աշխատանք, ապլիկացիա) նշանակությունը ինքնուրույնության դաստիարակության գործում: Երբ երեխան պատկերում է տարբեր իրավիճակներ, շարժումներ, ծեփակերտում է տարբեր կերպարներ, նա ամեն ինչում նախաձեռնություն է ցուցաբերում: Այստեղ կարևոր է, որ մանկավարժը հաճախակի երեխաներին հնարավորություն տա ինքնուրույն ընտրել աշխատանքի թեման, նյութը, գույները, կոմպոզիցիոն լուծումները: Առարկայի ընկալումը գործնական ճանապարհով, ամրապնդվում է գիտակցության մեջ: Այս կամ այն առարկայի որակները, չափը, գույնը, դառնում են ոչ միայն առանձին, որոշակի

առարկաների հատկանիշներ, այլ ընդհանրացվում են որպես տարբեր առարկաների բնորոշ: Երեխան արդեն կճանաչի և կանվանի այդ հատկանիշները անծանոթ առարկաների մեջ: Երախայի ուշադրությունը հրավիրելով պատկերվող իրադրությունների, մարդկանց, կենդանիների արտահայտչականության, բնորոշ մանրամասների, գույների գամմայի, ձևի վրա՝ նրան աստիճանաբար մոտեցնում ենք ընկալվածը տարրականորեն գնահատելու կարողությանը:

Արդյունավետ գործունեությունը նախադպրոցական տարիքի երեխաների ամենահետաքրքիր գործունեության տեսակներից է: Գործունեության այս տեսակի միջոցով երեխան հնարավորություն է ստանում գեղարվեստական ստեղծագործության միջոցով արտահայտել իր տպավորությունները, վերաբերմունքը շրջապատող առարկաների և երևույթների նկատմամբ: Սրա հետ մեկտեղ երեխան հուզական տպավորություններ է կուտակում, անհատական հետաքրքրություններ, հակումներ և ունակություններ է ձեռք բերում: Երեխան պլանավորում է իր գործողությունները, ինքնուրույն իրականացնում իր գաղափարները: Այս գործունեության ընթացքում ձևավորվում են անձի այնպիսի որակներ, ինչպիսիք են հետքրքրասիությունը, ինքնուրույնությունը, մտավոր ակտիվությունը:

ԳԼՈՒԽ 2. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՄԱՆԸ

Միջին խումբ

Տևողությունը 25-30ր

Նպատակը՝ դուրս բերել այնպիսի մեթոդներ, որոնք կօգնեն զարգացնել երեխայի ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը և ստեղծագործ միտքը:

Խնդիրները՝ Նախաձեռնողականության, ինքնուրույնության, ստեղծագործ մտքի զարգացման վերաբերյալ տեսական վերլուծություն, ստեղծագործ մտքի խթանում Ցույց տալ ազատ մտքի կարևորությունը, ինչպես նաև սահմանները, թե որտեղ ինչպես կարող են իրենց դրսևորել

Վերջնարդյունք՝ երեխան անկաշկանդ խոսի իր մտքերի գաղափարների մասին, հասկանա ստեղծագործ մտքի կարևորությունը:

Կարողունակություն՝ ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

Անհրաժեշտ նյութեր՝ տարատեսակ խաղալիքներ, մատիտներ, գունավոր թղթեր, հաշվողական փայտիկներ և այլն:

Խաղի թեմա՝ տոնածառ

Տեսակը՝ աշխատանք կենտրոններում

Փորձարարական հետազոտության ընթացքում բացվեցին արվեստի, մաթեմատիկայի և մնացած բոլոր կենտրոնները: Երեխաներին առաջարկվեց հետևյալ խաղը: Խմբում եղած պարագաներով և խաղալիքներով ստեղծել նորովի տոնածառ: Այն կարող է պատռաստված լինել փայտային խաղալիքներց, մատիտներց, թղթից կամ տարատեսակ խաղալիքներց:

Երեխաները մի պահ շփոթվեցին, կարծես չկարողանային կենտրոնանալ և չհասկանային թե ինչ է իրենցից պահանջվում: Երեխաները սկսեցին ակտիվ ներգրավվել ծաղի մեջ այն բանից հետո, երբ նրանցից մեկը ասաց . << ես հասկացա, իմ տոնածառը կպատրաստեմ մատիտներով>>:

Խաղի ամբողջական ժամանակը տրվել էր երեխաներին 15 րոպե: Խաղի ավարտից հետո սկսեցինք ամփոփել, երեխաների երևակայությունն ու ստեղծագործ միտքը զարմացրեց բոլորիս: Տոնածառներ ստեղծվել էին ավտոմեքենաներից (շարելով իրար վրա երեխան ստացել էր տոնածառի տեսք), լեգոներից, մատիտներից, հաշվեձողիկներից և այլն: Կային երեխաներ, որ ընդօրինակել էին կողքի երեխաների աշխատանքներին, բայց ինքնուրույնությունը ցուցաբերել էին տոնածառի ձևավորման մեջ:

Նույն առաջադրանքը կրկնեցինք 4 տարբեր օրեր , տալով նույն հրահանգը, բայց պատրաստման առարկան փոփոխվեց՝ կենդանու պատկեր, ծաղիկ, միրգ:

Ամբողջ ընթացքում հետևում էինք երեխաների ստեղծագործ մտքին և ինքնուրույնությանը:

Հետազոտության ավարտից հետո վերլուծեցինք արդյունքները և եկանք այն մտքին, որ ճիշտ հրահանգները և հետևողական վերաբերմունքը առաջացնում են երեխայի մոտ ինքնուրույնություն և նախաձեռնողականություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, մեր կողմից կատարված վերլուծությունը, հետազոտական աշխատանքի արդյունքների ամփոփումը հնարավորություն տվեց կատարել հետևյալ եզրակացությունները՝

- երեխայի ինքնուրույնությունը ձևավորվում է տարբեր տեսակի գործունեության ընթացքում՝ խաղային, ուսումնական, աշխատանքային և այլն:
- ինքնուրույնությունը ձևավորվում է վաղ մանկությունից և ամրապնդվում է ամենապարզ հմտությունների և սովորությունների հիման վրա:
- ինքնուրույնությունը երեխայի մոտ դրսևորվում է հետաքրքրասիրությամբ, նախաձեռնողականությամբ, ակտիվությամբ ևնպատակասլացությամբ:

Առաջադրանքների ժամանակ երեխաները ձգտում էին լինել ինքնուրույն, մեծահասակի օգնությանը դիմում էին հազվադեպ: Հետազոտական առաջադրանքների կատարման վերջում երեխաները փորձում էին իրենց կատարած սխալները ինքնուրույն շտկել, մեկնաբանել թե, որ գործողությունը ինչի համար են կատարել: Երեխաները կարողանում են նպատակ դնել և պարզագույն քայլերի շնորհիվ հասնել դրանց, սկսած աշխատանքը հասցնել ավարտին, որոշ դեպքերում դիմելով մեծահասակի օգնությանը:

Այսպիսով երեխաների նախաձեռնողականության և ինքնուրույնության ձևավորմանն ուղղված փորձարարական հետազոտության աշխատանքները ցույց են տալիս, որ երեխայի գործունեությունում ճիշտ կազմակերպված մանկավարժական աշխատանքի, ինչպես նաև ծնողի հետ աշխատանքի արդյունքում կարող ենք հասնել զգալի արդյունքի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Ց.Ս. << Մանկավարժություն>> Երևան 2004թ.
2. Արզումանյան Զ.Ս. <<Հոգեբանություն>> Երևան 2003թ.
3. Մարության Ս., Ա.Դալլաքյան, <<նախադպրոցական Մանկավարժություն >> Բուհական դասագիրք: Երևան2008թ
4. Մարության Ս. <<Նախադպրոցականի ինքնուրույնության դաստիարակումը միջանձնային հարաբերություններում>>. Երևան 2008 թ.
5. Միտոյան Հ. -Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար:
6. Акулова. Е. Формируем у детей самостоятельность и ответственность //Дошкольное воспитание. –2009.–С. 52-58.

ՀԱՎԵԼՎԱԾ

ԴԻՏԱՐԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

- Արդյո՞ք դաստիարակը հասավ պարապմունքի նպատակներին և ո՞ր կարողությունների զարգացմանն էին ուղղված աշխատանքները:Պարապմունքի նպատակն էր բացահայտել սաների ինքնուրույնության և նախաձեռնողականության սահմանները, և ճշգրիտ հացադրումների ու հրահանգների արդյունքում բավականին զարմացնող , հետաքրքիր արդյունքներ ստացվեցին:
- Ինչպե՞ս էին իրենց զգում երեխաները: Սկզբում երեխաները կաշկանդված ու լարված էին. չէին հասկանում պահանջը և իրենց ազատության սահմանը, բայց բավականին արագ ինտեգրվեցին ու հետազոտությունը վերածեցին ակտիվ խաղ-մրցույթի:
- Հիմնավորել. Արդյո՞ք դաստիարակի կողմից հետազոտվող թեմայի կարևորությունը մեծ է նախադպրոցական կրթության մեջ և ի՞նչ խնդիրների լուծմանն է միտված այն: Երեխային ցույց տալով երևակայական աշխարհի հնարավորությունները և սովորեցնելով ճիշտ օգտվել դրանից կայացած, ինքնուրույն անձ մեծանալու առաջնային գրավականներից է: